

Աղքատություն և հավասարություն Մեղմագիր Եվրոպա և Կենտրոնական Ասիա Հայաստան Հոկտեմբեր 2019

2008 և 2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո Հայաստանում աղքատության կտրուկ աճին 2010 թ. սկսած հաջորդեց աղքատության շարունակական նվազումը՝ հասնելով նախաճգնաժամային մակարդակին: Օրական 3.2 ԱՄՆ դոլար (2011 թ. գնողունակության համարժեքությամբ (ԳՀ)) կազմող աղքատությունը 2010 թ. գազաթնակետից՝ 20.5 տոկոսից նվազեց՝ 2017 թ. կազմելով 12.3 տոկոս: Աղքատության նվազումը պայմանավորված էր քաղաքային վայրերում մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտի աճով և գյուղական վայրերում գյուղատնտեսական արտադրանքի համեստ աճով: Մոցիալական ծախսերը, հիմնականում տարեցների բաշխողական կենսաթոշակները և ընտանեկան նպաստների ծրագիրը, օգնեցին տարեցների և աղքատ ու անապահով տնային տնտեսությունների եկամուտների ավելացմանը: Ի տարբերություն նշվածի, Ռուսաստանից կատարվող դրամական փոխանցումների նվազումը նպաստեց աղքատության շարքում 2015 թ. փոքր ելուստին: Աղքատության օջախները պահպանվում են, և աղքատության կրճատման և բաշխվածության ստորին հատվածում գտնվողների կենսապայմանների բարելավման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեք առանցքային գործոն: Նախ՝ տարածքային անհամաչափությունները պահպանվում են, ընդ որում՝ աղքատության ցուցանիշներն ավելի բարձր են երկրորդային քաղաքներում և գյուղական վայրերում, քան Երևանում: Երկրորդ՝ պահպանվում է աղքատության նկատմամբ խոցելիությունը, և բազմաթիվ տնային տնտեսություններ, որոնք խուսափեցին աղքատությունից, շարունակում են ետ մնալու վտանգ կրել, այնպիսի ցնցումների հարվածի դեպքում, ինչպիսիք են գործազրկությունը, տարերային աղետները և ծանր հիվանդությունը: Եվ երրորդ՝ ըստ Հայաստանի բազմաչափ աղքատության պաշտոնական ցուցանիշի հայաստանցիներից շատերն աղքատ են ոչ նյութական չափումներով, ինչի հետևանքով կրում են մարդկային կապիտալի, ոչ բավարար բնակարանային պայմանների և հանրային ծառայությունների հասանելիությանն առնչվող բազմակի և համընկնող զրկանքներ:

2012-2017 թթ. ընկած ժամանակահատվածը ցույց տվեց, որ բաշխվածության ստորին 40 տոկոսի մոտ, ընդհանուր բնակչության համեմատ, սպառման անճ ավելի դանդաղ էր (1.8 տոկոս՝ 3.2 տոկոսի համեմատ), ինչը հանգեցրել է երկրում անհավասարության ավելացմանը: Բաշխվածության ստորին հատվածում գտնվող տնային տնտեսություններն ավելի հավանական է, որ հայտնեն հմտությունների պակասի մասին և եթե նրանց հաջողվում է խուսափել գործազրկությունից՝ նրանք աշխատում են ավելի նվազ արտադրողական աշխատատեղերում:

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ	Աղքատների թիվը	(հազար)	ցուցանիշ (%)	Ժամանակահատված
Աղքատության ազգային գիծ		753.1	25.7	2017
Աղքատության միջազգային գիծ		39.8	1.4	2017
Մեկ շնչի հաշվով օրական 402.9 ՀՀ դրամ (2017) կամ 1.90 դոլար (2011 թ. ԳՀ)				
Ցածր միջին եկամտով դասի աղքատության գիծ		363.0	12.3	2017
Մեկ շնչի հաշվով օրական 678.5 ՀՀ դրամ (2017) կամ 3.20 ԱՄՆ դոլար (2011 թ. ԳՀ)				
Բարձր միջին եկամտով դասի աղքատության գիծ		1,472.7	50.0	2017
Մեկ շնչի հաշվով օրական 1166.3 ՀՀ դրամ (2017) կամ 5.50 ԱՄՆ դոլար (2011 թ. ԳՀ)				
Բազմաչափ աղքատության ցուցանիշ			1.4	2017

ՀԱՄԸՆՆԱԿՆԵՐԻ ԲԱՐՉԱՎԱՃՈՒՄ

Սպառման տարեկանացված աճը մեկ շնչի հաշվով՝ ստորին հատվածի 40 տոկոսի մոտ	1.76	2012-2017
--	------	-----------

ԱՆՇԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջինի ինդեքս	33.6	2017
Համընդհանուր բարգավաճման հավելագին=ստորին հատվածի 40տոկոսի ան-միջին ան	-1.46	2012-2017

ԱՃ


Մեկ շնչի հաշվով տարեկանացված ՀՆԱ ան	3.1	2012-2017
Մեկ շնչի հաշվով սպառման տարեկանացված ան՝ տնային տնտեսությունների հետազոտությունից	3.22	2012-2017

ԵԿԱՄՏԻ ՄԻՋՆԱԹԻՎ

Տարեկան եկամտի միջնաթվի ան	1.77	2012-2017
----------------------------	------	-----------


Աղբյուրներ՝ ՀՉՑ ՀՆԱ-ի համար, Ազգային վիճակագրական գրասենյակները՝ աղքատության ազգային գծերի համար, POVCALNET՝ 2019 թ. սեպտեմբերի դրությամբ և Համաշխարհային մոնիթորինգի տվյալների շտեմարանը՝ մնացածի համար:

ԱՂՔԱՏՆԵՐԻ ԹՎԱԲԱՆԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇ, 2001-2017 թթ.



Աղքատության ցուցանիշ
 (%)
 ■ Աղքատության միջին գիծ
 ● Ցածր միջին ետ գիծ
 ● Բարձր միջին ետ գիծ
 ▲ ՀՆԱ
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ
 (հազար)

ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ, 2001-2017 թթ. Չինի ինդեքս



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ՝ օգտվելով SSYԱՀ/ECAPOV/GMD-ից

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ՝ օգտվելով SSYԱՀ/ECAPOV/GMD-ից

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բաշխվածությունը խմբերի միջև, 2017

Բաշխվածությունը խմբերի միջև, 2017	Ոչ աղքատ Աղքատ Ստորին 40 վերին 60				Բազմաչափ աղքատության ցուցանիշներ (մարդկանց %). 2017
	Ոչ աղքատ	Աղքատ	Ստորին 40	Վերին 60	
Քաղաքային բնակչություն	89	11	39	61	Նյութական աղքատություն (սպառում)
Գյուղական բնակչություն	86	14	42	58	Մեկ անձի հաշվով օրական սպառումը կամ եկամուտը 1.90 ԱՄՆ դոլարից պակաս է
Տղամարդիկ	88	12	40	60	Կրթություն
Կանայք	87	13	40	60	Դպրոցահասակ առնվազն մեկ երեխա դպրոցում ընդգրկված չէ
0 - 14 տարեկան	83	17	50	50	Տնային տնտեսության չափահասները տարրական կրթությունը չեն ավարտել
15 - 64 տարեկան	88	12	38	62	Հիմնական ենթակառուցվածքների հասանելիություն
65 և բարձր տարիքի	91	9	36	64	Չկա սահմանափակ-ստանդարտ խմելու ջրի հասանելիություն
Կրթություն չունեցող (16+)	84	N/A*	50	50	Չկա սահմանափակ-ստանդարտ կոյուղու հասանելիություն
Տարրական կրթությամբ (16+)	87	13	40	60	Չկա էլեկտրաէներգիայի հասանելիություն
Միջնակարգ կրթությամբ (16+)	87	13	42	58	
Բարձրագույն/հետ-միջնակարգ կրթությամբ(16+)	95	5	24	76	

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ՝ օգտվելով SSYԱՀ/ECAPOV/GMD-ից
 Աղբյուրը՝ Համ. բանկ, օգտվելով SSYԱՀ/ECAPOV/GMD
 Ծանոթ. N/A արժեքը բացակայում է, N/A* արժեքը հանվել է՝ 30-ից պակաս դիտարկումներով պայմանավորված

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում աղքատության և անհավասարության վերաբերյալ վիճակագրությունը պատրաստում է Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ)՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված տարեկան հետազոտության (ԿԱՀ) հիման վրա: Աղքատության պաշտոնական գնահատականները հիմնված են հիմնական պահանջների արժեքի մոտեցման վրա, ըստ որի որոշվում են աղքատության երեք տարբեր գծերը. (1) պարենային աղքատության գիծը, որն օգտագործում է սննդակարգի նվազագույն անհրաժեշտ կալորիականությունը, (2) աղքատության ստորին գիծը և (3) աղքատության վերին գիծը, որը հաճախ անվանվում է աղքատության ազգային գիծ: 2017 թ.-ին հրապարակված տվյալների ամենավերջին տարում, ըստ աղքատների թվաքանակի երեք տարբեր ցուցանիշները կազմեցին 1.4, 10.6 և 25.7 տոկոս: Միկրոտվյալների հասանելիությունն ապահովվում է ՀՀ ԱՎԾ կայքէջի և Համաշխարհային բանկի տվյալների ցուցակի (կատալոգ) միջոցով: Միջազգային համադրելիության ապահովման համար՝ Համաշխարհային բանկի աղքատության միջազգային ցուցանիշները հաշվարկվում են ըստ աղքատության երեք գծերի՝ օրական 1.90 ԱՄՆ դոլար, 3.20 ԱՄՆ դոլար և 5.5 ԱՄՆ դոլար, բոլորն էլ արտահայտված 2011 թ. ԳՀ: Աղքատության ազգային և միջազգային ցուցանիշների մակարդակները և միտումները կարող են տարբերվել՝ (1) աղքատության շեմի տարբեր չափերի սահմանման և (2) բարեկեցության գնահատման համար սպառման ազդերգատի համար տնային տնտեսությունների չափի հաշվարկային այլ գործակցի կիրառման պատճառով (չափահաս անձին համարժեքությունը՝

մեկ շնչի համեմատ): Բազմաչափ աղքատության համաշխարհային ցուցանիշը (MPM) ձևավորվում է տնային տնտեսությունների վեց ցուցանիշներով՝ գրկանքը համակցելով ըստ երեք չափումների՝ նյութական աղքատություն, կրթություն և հիմնական ենթակառուցվածքային ծառայությունների հասանելիություն: Այն տնային տնտեսությունները, որոնց ընդհանուր գրկանքների կշռված հանրագումարը 1/3 կամ ավելի է, համարվում են բազմաչափ աղքատության պայմաններում գտնվող: Այնպես, ինչպես նյութական ցուցանիշը, բազմաչափ աղքատության Հայաստանի պաշտոնական ցուցանիշը ևս տարբերվում է համաշխարհային ցուցանիշից, որը բաղկացած է չորս ոլորտի 25 ցուցանիշից:

ՀԱՐՄՈՆԻԶԱՑՈՒՄ

Սույն սեղմագրում ներկայացված թվերը հիմնված են ECAPOV տվյալների շտեմարանի վրա, որը ստեղծվել է 1998 թ.-ին՝ աղքատության տարածաշրջանային գեկույցին աջակցելու համար: Այն կառավարվում և հարմոնիզացվում է վիճակագրության գարգացման Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի թիմի կողմից (ECATSD): ECAPOV-ը ներառում է 29 երկիր՝ յուրաքանչյուր երկրում միջինը 8 հետազոտությամբ: Վերջերս հավաքածուն համալրվել է ԵՄ երկրների համար ԵՄ վիճակագրական ծառայությունից (Eurostat) ստացված EU-SILC տվյալներով: Յուրաքանչյուր հետազոտություն կազմված է վեց մոդուլից՝ Համաշխարհային մոնիթորինգի տվյալների շտեմարանի (GMD) հարմոնիզացման ուղեցույցերի համապատասխան, համաշխարհային աղքատության մոնիթորինգի համար օգտագործվող բարեկեցության գնահատման համար սպառման ագրեգատի կառուցումը ներառյալ: Տվյալների օգտագործման պայմանները համապատասխանում են սկզբնական տվյալներ պատրաստողների հետ համաձայնություններին: